



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-8  
2-30

Հ.

ԳՐԱԼԵՏԱՆԵՐ ԲՈՒՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԵՔ

Ժ. Տ. Գ. Խ.

uv

# ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ

## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ

Կազմեց՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

# Հ Ա Յ Ո Ց Լ Ե Ջ Ո Ւ

Ա. ԿՈՆՅԵՆՏՐ

Հ. Ս. Ն. Հ.  
Ժ. Տ. Գ. Խ.  
ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ  
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ  
ՅԵՐԵՎԱՆ  
1-9-3-1

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Гос. Публ. Библиотека  
ՀՍԽՀ—ՕՏՐԱ  
Ил. А. Мясникова  
Ս. ՄՅԱՍՆԻՉԱՆԻ ԱՆՎԱՆ

10.06.2013

1736

9-8  
3-30

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ  
ԳՐԱՌԵՊԿԱՐ 6491 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 2657  
ՏԻՐԱԺ 500

**Ընկերներ,**

Ի ուր պատրաստվում եք շինարարական և ելեկտրամեխանիկական վաճառքայի բանվորներ (բրիգադիւրներ) դառնալու: Այդ աշխատանքի ընթացքում դուք պիտի կատարեք բանվորների աշխատանքի և աշխատավարձի հաշվառում, պետք է կազմեք հաշվետվութուն, գրավոր զեկուցում և այլն:

Այս բոլորից հետևում է, վոր դուք պետք է հայոց լեզվից վարժ ունակութուններ ձեռք բերեք, պետք է պարզ և գեղեցիկ գրեք, վոր ուրիշները կարողանան ձեր գրածը հեշտ կարդալ, պետք է կետադրութուն իմանաք, վոր ձեր գրածի մեջ մտքերի շիթութունը չլինի, պետք է մի քիչ քերականութուն իմանաք, վոր կարողանաք ուղիղ գրել և խոսել, պետք է սովորեք գրել առանց տառախալների և վերջապես պետք է կարողանաք գրավոր ձեր մտքերն արտահայտել:

Այն նյութը, վոր պետք է անցնենք, բաժանված է յոթ առաջադրութուններով:

1. Գործարան և գործարանային կյանք,
2. Կոլխոզային գյուղ,
3. Լենինը բանվոր դասակարգի առաջնորդ և Հոկտեմբերյան հոգաբարձութուն,
4. Կարմիր Բանակը,
5. Հայ բուրժուազիան,
6. Բանվորների դրութունը նախահեղափոխական շրջանում և
7. Գյուղացիների դրութունը նախահեղափոխական շրջանում:

Յուրաքանչյուր առաջադրութուն յենթադրվում է մի ամսվա համար: Առաջադրութուններին զուգընթաց մենք կսովորենք քերականութուն, ուղղագրութուն, կետադրութուն, գրագրութուն, նամակագրութուն, զեկուցում գրել, հոդված գրել և այլ գործնական աշխատանքներ: Հարկավոր է, վոր ձեզանից ամեն մեկն զգա և հասկանա, վոր ձեր պետությանը, հակաբայերով առաջ ընթացող շինարարությանը բախարարելու համար, հարկավոր է ունենալ պատրաստի և գիտակից մարդիկ, ուշադիր կերպով ուսումնասիրեք առաջադրութունները և ճշտիվ կատարեք այն բոլորն, ինչ վոր պահանջվում է:

Առաջադրութունների ընթացքում տրվելու յեն նաև գրավոր աշխատանքներ, վոր պետք է կատարեք և ուղարկեք ինձ ուղղելու համար: Արդ աշխատանքները պետք է գրված լինեն թանաքով, պարզ, մաքուր և վարժան կարելի յե գեղեցիկ: Աշխատանքները յետ տանալուց հետո ճշտիվ պետք է կատարեք այն ցուցմունքները, վորոնք նշված կլինեն:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ

1. ԳՈՐԺԱՐԱՆ ՅԵՎ ԳՈՐԺԱՐԱՆԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Առաջադրութեան նպատակն է ծանոթանալ գործարանին, այնտեղ կատարվող աշխատանքներին, բանվորներին և սոսակաարակ գործարանի ներքին կյանքին:

Դրա համար պետք է կարդալ և ուսումնասիրել:

ԱՆՁԱՆ

1. Դ Ա Ս Ա Լ Ի Ք Ը

(Հատվածներ)

1. ԱՐՏՈՆ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Արտոյի համար ստաջին որը մեծ դժվարութեամբ անցավ գործարանում: Կարծես ոտարութեան մեջ ընկած լինեք նա:

Երջապատում ամեն ինչ շփոթ է, խորթ ու ոտար: Մեծ մտավախութեամբ եր նայում նա հսկայական մեքենաներին, վորոնք ելեկտրական կոճակի մի փոքրիկ հպումից մոնչալ ելին սկսում ու սպառնում, կարծես, կտոր-կտոր անել մոտ յեկողին:

«Վո՞նց ել ոխակ են անում, վո՞նց ել չեն վախում դրա վրին կաղնողները» — մտածում եր Արտոն,

Սակայն նրանք վոչ միայն Արտոյի նման չեյին զարգանդում, այլ մինչև անգամ մեքենայի հետ յերգեր ել եյին յերգում,

Յերկրորդ ու յերրորդ որերն ել ծանր անցան:

Արտոն անհամբեր միշտ անցնում եր գործարանի դրասենյակի տոջևով և աչքի ճոթով, թաքուն, ժամացույցին եր նայում, թե՛ քանի՞ ժամ կա դեռ, կամ յի՞րբ կգա «չարաչի» ժամանակը:

Ժամերը ծանր են սահում: Վարպետ Նիկողոսն ել Արտոյի դուրը չի գալիս: Պոչավոր ակնոցների տակից, աչքերը չոսած, անդադար մտիկ է տալիս թե ո՞ւր է դնում, կամ ի՞նչ է անում Արտոն:

«Ես ի՞նչ գերութունն ա, ախպե՛ր, — մտածում եր Արտոն, — թամամ վոր դերութունն... ընենց ա վարավուրդ անում, ընենց ա թամաչ անում, վոր չես ել կարա տեղիցդ ժամ գալ: Թո՛ւհ, ես ի՞նչ թարս մարդի ոտտ եկանք...»:

Վարպետը կամաց-կամաց նրան «լծել» սկսեց: Թե ստաջին որերը թող-

նում եր, վոր Արտոն մա՛ն գա գործարանում, մեքենաները դիտի, ուսում-նասիրի, իսկ հիմա արդեն գործի դրեց նրան:

Արտոն ծանրութուններ է փոխադրում, մեքենաներ մաքրում, յուղում, պտուտակները սրում:

Բայց ելի ժամացույցը չի մոռացել:

Դրեթե ժամը մի անգամ, կամաց նա սողում է դրասենյակի դռան ստաջով ու աչքի ճոթով տնողում ժամացույցի սլաքները:

— «Հա՛յ, կոտրվե՛ք դուք, հեչ տեղից ել ժամ չեն գալիս», — մտածում է նա, յերբ նրա կարծած յերեքի փոխարեն, ժամացույցը մի ժամ եր միայն տուաջ գնացել:

Ժամերը ծանր են սահում, գործը դժվար է, իսկ վարպետ Նիկողոսն ել՝ հեչ Արտոյի դուրը չի գալիս:

2. ԱՐՏՈՆ ՎՈՐՊԵՍ ԲԱՆՎՈՐ

Արտոյի ընդունվելուց մի ամիս եր անցել, յերբ առավոտյան վարիչ Սանթրոսյանը մոտեցավ վարպետ Նիկողոսին, բարևեց ու—

— Հը՞, վո՞նց ա սրա բանը—վրա բերեց, մատնացույց անելով Արտոյին—մի բան դուրս գալի՞ս ա, թե չե...:

Վարպետը գլխով բացասական նշան տվեց:

Սանթրոսյանն սկսեց վտտից մինչև գլուխ դնել Արտոյին, կարծես անաջին անգամն եր տեսնում, և նոր եր գործի ընդունում, ապա մի կողմ տանելով վարպետ Նիկողոսին, ականջին փսփսաց.—

— Թե կտենաս բանի պետք չե, պոչը խուզիլ տալ—տու:

Հետո մոտենալով Արտոյին, պատի մոտ տարավ ու սկսեց.

— Ծիտը խարար ա բերել, վոր շատ էս անգալութին անում: Խելքդ դըլ-իիդ հավաքի, փեշակ սովորի, որինակի համա անգալների պոչը շուտ ա խուզվում... Վերջը կփոջմանես, հա՛...:

— «Ես ի՞նչ կյանք ա, ախպե՛ր, ես ի՞նչ որենք ա, քանի՞ խաղեյին, քանի՞ խոսացող կա գլխիդ: Ձեա իմանում վորին լսես, յա վորի՞ն ջուղաբ տաս: Ըսենց ել բանվորական իշխանութուն կլի, վոր մի բանվորի գլխին քառասուն խաղեյին կա կաղնած...», մտածում եր Արտոն:

Այդ մտքերը, Սանթրոսյանի սպառնալիքը, գործի դժվարութունը, ժամանակի դանդաղ սահելը, վարպետ Նիկողոսի խոժոռ ու անդուբեկան նաբվածքը, Արտոյին անչափ ջղախնացրել ու վրդովեցրել էյին և նա մեքենան սրբելիս մի քիչ անդուշտութունից, մի քիչ ել վրդովմունքից չուռ տվեց 2 փթանոց բենդինի ամանը և բենդինը շաղ տվեց գետնովը:

Ինչպե՛ս գաղաղեց վարպետ Նիկողոսը:

Պոչավոր ակնոցների տակից նրա աչքերը հրդեհվում և ասես դուրս էյին ուղտմ պրծնել, իսկ կնճուռ ճակատին քանդակվել էյին մանկան մատների հաստութեամբ կապույտ յերակները:

— ...Կորիք աչքիս առաջից... արո՛ւնդ թող թափեր եդ բենդինի տղը... լակո՛ւտ...:

Արտոն լուռ ու սարգնած կծկվել եր պատի տակ և ջղախնութեամբ կրրծում եր յեղունկները:

Վարդետը՝ վարպետ է, բայց բոլոր վարպետներն էլ միատեսակ չեն լինում:

Որինակ վարպետ Նիկողոսն ու վարպետ Ղևոնդը:

Ի՞նչ նմանություն սրանց մեջ:

Առաջինը յերկաթի նման մարդ է, կարուկ բնավորությամբ: Մի թերություն կամ հանցանք ունեցար թե չէ, խեղույն յերսուղե և խփելու: Մի անգամ պոչավոր ակնոցների տակից յերեսիդ նայեց, բախկան և, խեղույն կհասկանա բնավորությունդ, կճանաչի քեզ:

Այդ բնավորության համար էլ նա կոմքլիքի և բանվորներից շատերի սիրելին էր դարձել: Սանթրոսյանը նրանցից էր մեկ-մեկ խորհուրդներ հարցնում, իսկ կոմյերիտականները «պապաշա» յեն կանչում նրան:

Մի որ նա Արտոյի դառնալով—

— Այ, երեսիդ եմ ասում, անգալ ես. յես անգալներին չեմ սիրում: Սեղըդ գլխիդ հավաքի, բան սովորի՛: Եսքան վախտ ա, ինչ ետեղ ես, հեջ բան չես ֆահմում, բա դու յե՞րբ պտի բան սովորես:

Ինչքան էլ բանվորները սիրեն վարպետին, ինչքան էլ Սանթրոսյանը նրանից խորհուրդներ հարցնի և ինչքան էլ կոմյերիտականները նրան «պապաշա» կանչեն, բայց և այնպես նա Արտոյի դուրը չէ դալիս:

Արտոյի աչքում նա վոնց վոր մի հրեշ լինի, վորը պատրաստ է կտորկտոր անելու իրեն:

Նա այնպես է նայում վարպետին, վոնց վոխերիմ մի թնամու:

Բայց բոլորովին այլ է վարպետ Ղևոնդը:

Յերբ դնահատու կոնֆլիկտային հանձնաժողովում դրված էր Արմենակ Սարինյանի կատեգորիան բարձրացնելու հարցը, նա ձայն խնդրեց և սկսեց.—

— Եղ ընկերը հեջ բանի պետք չի, ախպեր, ինչ անում ես՝ բեյինք բան չի մտնի, գորորինակ, ասում ես վալյոկը լվա, նա վինան ա հոլորում, կամ թե ասում ես բենդին բեր, նա դնում պահեստապետի հետ գյալաջի յե բրոնավում: Զորորինակ նրա կշտին աշխատող Հայրապետը, ախոս չի՛, նրան իրեք կատեգորի յեկ վոր ավել տաք կորած չի: Հալա թողեք դրա կատեգորեն մնա հինք: Զորորինակ յեթե նա մի երկու ամսից հետո խասյաթի փոխեց, սրտով կպալ գործին, են վախտը մի կատեգորի կավելացնենք: Թե չէ, յորորինակ յեթե նրա կատեգորեն ավելացնենք, են լավ աշխատողի ձեռքն էլ կթուլանա...:

Մյուս սրբ, յերբ Արմենակ Սարինյանը, վորպես իր ավագ վարպետի, նրան դիմեց՝ կատեգորիայի մասին յեղած վորոչումն իմանալու համար, նա սկսեց.

— Բա՛ղդ չտանս, ողո՛ւլ, նեքան իտտեցի, ճար չեղավ, չախելացրին: Յես էլ գիտեմ, զորորինակ յեթե Հայրապետը 7 ստանա, դու խի՞ պտի չտանաս: Զորորինակ չի ուզում, Սանթրոսյանը: Դժվարությունն էլ դրա մեջն ա, թե չէ գորորինակ յես ինչքան էլ ուղենամ, յեթե Սանթրոսյանի սրտովը չեղավ՝ բան չի դառնա:

Արտոն էլ վարպետ Ղևոնդին էր սիրում: Նա ինչքան էր յերանի տալիս, վոր վարպետ Նիկողոսի փոխարեն՝ վարպետ Ղևոնդը լինի իրենց բաժանմունքի ավագը:

Ինչքան էլ վարպետ Նիկողոսն «անխղճորեն» դադի, ինչքան էլ «հոգևոր» լինի Արտոյի համար, բայց և այնպես նա ունի կարեկիցներ ու ցավակցողներ իր վշտերին:

Մի փոքրիկ շրջան է այդ:

Իրար մոտ, իրար ձուլված, իրար ցավերով տարող:

Մեկը՝ Կարոն է:

Կարոն կուսակցական է:

Քանի անգամ է նա փորձել կոմյերիտականության մեջ մտնել, բայց չէ հաջողվել:

Քարտուղարից վերցրել է անկետաները: Լրացրել: Ճոխացրած կերպով, «հեղափոխական անցյալի» վորոչ շարախով գրել կենսագրությունը, կցել դիմումին. դիմում տալու բոպելին, ինչ վոր մտքեր բռնել են նրա ձեռքը.—

«Յանի ո՞վ ա իմանում, իս իշխանությունը հաստատ մնալու յա՞», թե վոչ: Կարող ա փոխվեց: Լավ, վոր կոմսոմոլիստ չլինեմ, ի՞նչ կկորցնեմ... Խառնակ տարի յե, ախպե՛ր, ի՞նչ գործ ունեմ առանց ցավալ գլխիս ավետարանի տակ դնել...»

Մտածում էր Կարոն, հարցնում մի բանի անկուսակցականների կարծիքը և վորոչում հանում—«Քիչ էլ սպասենք, տենանք ի՞նչ դուրս կդա...» և դիմումն ու կենսագրությունը պահում մի որից չէ մի որ ոգտագործելու համար:

Մի անգամ էլ նա բոլոր ձեռակառույցիները կատարել և պատրաստվում էր դիմումը քարտուղարին հանձնել, յերբ իմացավ, վոր Անդրիայի և ԽՍՀՄ հարաբերությունները բարդացել են:

— Ինչ դիմում տալու վախտ է, յեղբա՛յր,—մտածեց նա և դիմումը նորից տուն վերադարձրեց: Յերկույան յերկար միտք արեց, ապա վերջնականապես կայուն վորոչում հանեց, պատեց դիմումը և վորոչեց: «Վոչ սրանց յեթին խառնվել, վոչ էլ շառին»:

Արտոյի յերկրորդ ընկերը կոմյերիտական Արամն էր:

Գործարանում աշխատանքը վերջանալուց անմիջապես հետո, Արամը տուն էր վաղում, հանում աշխատանքային մրոտ ու մաշված շորերը, մաքուր վերնաշապիկի վրայից կատում ոճիքն ու յիողկապը, լավ արգուկած շալ վարից հետո հաղնում փայլուն կոշիկները, ձեռնախայտը վերցնում և սրվածացնելով դուրս գալիս գրոնելու:

Քաղաքացի հեա Արամը բոլորովին մտերմություն չունի: Ասում է նու յնիսկ այդ դպրոցը:

— Յես բանվոր մարդ եմ, իմ ի՞նչ գործն ա, թե Մարքսը վո՞ր թվին ա ծնվել, կամ Լենինը վո՞ր քաղաքներն ա ման յեկել: Եղ բոլորը թող ինտելիգենտները սովորեն, վոր կարողանան կոմսոմոլի, կամ կուսակցության մեջ մտնել...: Մի թող կոխվ լինի՛, տեսնենք յես լավ կը կռվեմ, թե եղ Մարքսն ու Լենինն անգիր անողները...»—այսպես էր մտածում և հուսադրում իրեն Արամը:

Իսկ յերբ դիցելուլինայի կարգով նրան ստիպում էին քաղաքացի գնալ, նա, ճաշած ֆիզիկապես նստում էր դատարանում, բայց մտքով թափառում

եր թատրոնները, կինոները, աղջիկները յետևից ման դալիս, կամ թե հա-  
յաջքով խուզարկում դասարանում նստած կոմյեթիստուհիներէ աչքերը,  
դեմքը:

Քաղաքապետուհի ժամը՝ միակ ժամն էր, յերբ Արամը կենտրոնանում  
ու մտածում էր զանազան զվարճալիքների մասին:

Յերրորդը՝ Սիրակն է, նույնպես անկուսակցական:

«Ես իշխանութունը լավ իշխանութունն ա, համա վոր բարձր ու ցածրը  
կա, եղ ա խարար անում: Թե հավասարութունն ա, թող հավասարության  
լինի: Թող բերեն ուժիկներն ել հավասարեցնեն, վոր ասենք իսկապես բան-  
վորական իշխանութունն ա...»

Այս չորսը միջուկն են, իսկ սրանց ավելի մոտիկ կանգնած են Արսենը և  
Սեդրակը:

Վարպետ Ղևոնդն էլ՝ և՛ սրանց ասածներին էր համաձայն, և՛ մյուս-  
ների, և՛ բոլորի:

«Դժգոհների և ծուլերի յեղբայրական ընկերութուն» — այսպես էր բը-  
նորոշել բանվոր Մինասը և այդպես էլ կոչում էլին նրանց վողջ գործարա-  
նում:

### 5. ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ

- Յալլա՛, յալլա՛, յալլա՛ ա՛ա՛...
- Հա՛, հա՛, հա՛, հա՛ ա՛ա՛...
- Հա՛ դուբբան, հա՛ դուբբան, հա՛, հա՛ ա՛ա՛...
- Հա՛ ջա՛ն, հա՛ դուբբան...
- Յալլա՛, հա՛, յալլա՛, հա՛...

Ամբողջ գործարանը մրջնային աշխուժությամբ՝ թափել է բազում կանոն-  
նաժ բեռնատար ավտոմեքենաների շուրջը և իջեցնում է ստացված մեքե-  
նաները:

Սա յեւ յուրատեսակ խնճուղք է: Բոլորն ուրախ են, ծիծաղկոտ, աշխուժ:  
Իսկ Սանթրոսյանը: Ո՛ր, նրա քեֆին քեֆ չի հասնում: Մի տարուց ա-  
վելի յեր, ինչ նա ամեն տեղ պարծանքով խոսում էր — «Ապասե՛ք հլա մի  
Գերմանից մաշինեքս բերել տալուամ, ե-լախտը կիմանաք»: Ու հիմա եքս  
այդ անձկալի յերազանքն էր, վոր կյանք էր դարձել: Կապույտ խալաթը հա-  
զած, նա գնդակի նման գլորվում էր ավտոների շուրջը: Ամբողջ ուժով հրամ  
մեքենայի իջնող մասերի յետևից: Ու ամենապատասխանատու ուղեմատակա-  
տը դեկավարող հրամանատարի նման անում խիտ և սպառնական հրա-  
մաններ:

Բոլորն էլ աշխատում էլին: Սկսած Սանթրոսյանից մինչև վարպետ Նի-  
կողոսը և վարպետ Մինասից մինչև Արտոն:

— «Համա զժար ա հա՛, — մտածում էր Արտոն ծանր բեռի տակ, — քանի  
ես ի՛նչ մեր գործն ա, չեմ հասկանում»:

- Յալլա՛, հա՛, յալլա՛, հա՛...
- Հա՛ դուբբան, հա՛ դուբբան, հա՛, հա՛...
- Հա՛ ջա՛ն, հա՛ ջա՛ն, յալլա՛, յալլա՛...

Բոլորի ճակատից էլ կախվել էլին քրտինքի կաթիլները:

Բոլորն էլ շարժարկում էլին, բայց ուրախ:

Մոռյլ էր գերմանացի մասնագետը: Իր բերած մեքենաների նման ծանր  
ու մոռյլ:

Ո՛վ կհամարձակվեր ծիծաղել նրա առաջ, կամ բարձրաձայն խոսել:

Մեքենաները սարքի դեցեց, բանվորական խնճուղքում բոլորը խմեցին  
նրա կենացը և մյուս որվանից սկսեց բանեցնել բոլորովին նոր ձևի մեքե-  
նաները:

Սանթրոսյանը կարլ Հերմանի «փեչն» էլ «քաշեց» իր առանձնատեսակ-  
կում, ապա ձեռքը սեղմելով դուրս յեկավ և նրա հետ միասին դնացին գոր-  
ծարանը:

Նա արդեն ընդունակ յերիտասարդ բանվորներից ջոկել էր մի յոթ հա-  
զու՝ նոր մեքենաների վրա սովորելու համար:

Նոր մեքենաները խոչոր չափով բարձրացնում էլին արտադրողականու-  
թյունը և իջեցնում գները:

Նրանցից յուրաքանչյուրը մի բանվորական որվա ընթացքում կատարում  
էր չորս բանվորի գործ: Իսկ յեթե յերեք հերթով, անընհատ աշխատեցնե-  
լին, յուրաքանչյուրը նրանցից կարտադրեր 12 բանվորական միավորի չափ:

Իրա համար էր Սանթրոսյանն այնքան ուրախ:

Իրա համար էլ Սանթրոսյանն ամեն տեղ նոր մեքենաների գովքն էր անում  
և ամեն որ նորանոր այցելուներ բերում գործարանը և բացատրում այդ  
«հաղվագյուտ» մեքենաների գաղտնիքը:

Մոռյլ էր դերմանացի մասնագետը: Մանր ու մոռյլ:

Յերբեք չէր ծիծաղում:

Աշխատում էր ինչպես ժամացույցը: Վո՛չ մի ավելորդ շարժում, վո՛չ մի  
ավելորդ խոսակցութուն:

Յերիտասարդ բանվորներն էլ աշխատում էլին նրա ժամացույցային  
տակտով, առանց խոսակցության, առանց կատակելու: Նրանք վոչ թե վա-  
խից էլին այդ անում, այլ պատկառում էլին այդ մոռյլ մարդուց:

Ի՞նչպես ծիծաղել կամ կատակել, յերբ այդ մարդն ամբողջ ուժով ու  
ուշադրությամբ կենտրոնացած իր գործին՝ լուռ կերպով աշխատում էր:

Ծիծաղել կամ խոսել — դա հավասար էր այն բանին, յերբ մեկը յերգեր  
պատասխանատու և կարևոր ժողովում: Իսկ ո՞վ կը համարձակվեր այդ անել:

Կարլ Հերմանը Սանթրոսյանի պես սրտացավ էր դեպի գործն ու մեքե-  
նաները: Նա ուշադրությամբ հետևում էր աշակերտների աշխատանքներին,  
ժամերով կուցած մեքենաների մոտ, ձեռքի և դեմքի շարժումներով նրանց  
բացատրում և սովորեցնում էր նոր մեքենաների գաղտնիքները:

Իսկ նրանք ունկնդրում էլին այդ մոռյլ մարդուն հմայվածի նման:

Յերկու շաբաթ էր անցել, բայց ամբողջ գործարանում խոսում էլին «նե-  
մեցի» բերած դիտելալիսի մասին: Վարպետները վարմացել էլին, վոր այն  
«չուրուղչի» ու «գլավադա» տղերանցից այդպիսի լուսկյաց, գործի մարդիկ  
էլին դուրս յեկել:

— Հալալ ա նեմեցին, ախալ՛ր, գործը լավ դեց:

— Բա խի՞ յեն ասել նեմեց... — խոսում էլին վարպետները:

Սանթրոսյանը չափազանց զոհ էր Հերմանից: Գործարանի ամեն մի  
բաժանումներում նրա գովքն էր անում: Վորպես որինակ՝ նրան հանձնարա-  
րում էր բոլոր վարպետներին:

Բաժանմունքի յերիտասարդ բանխորհրդին եւ շատ գոհ էլին Հերմանից :  
Նրանք մեծ ուշադրութեամբ լսում ու կատարում էլին նրա յուրաքանչյուր  
ցուցմունքը և ամեն որ տուն դնում՝ մի նոր բան սովորած :

6. ՎԱՐՊԵՏ ՄԻՆԱՍՆ ՈՒ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Փոքրիկ բաժանմունքում, գործարանի ամենաբարդ միակ մեքենայի վրա,  
աշխատում են նրանք :

Վարպետ Մինասը 37 տարի յե, ինչ բանում և այդ նույն սեղանում, նույն  
մեքենայի կողքին :

Յե՛վ նրան այնքան ծանոթ են մեքենայի բոլոր մասերը, բոլոր մանրա-  
մասնությունները, վորքան իր հինգ մատները :

Նա բարձրահասակ է : Ճաղատ զլխով, ճակատին խոր կնճիռներ, դեմքին  
ծալքեր ու խորշոմներ : Ձեռները մազոլներէ կարծրացել, կոշտացել, ճեղք-  
ճեղքվել են բազմամյա կաղնու կեղևի նման :

Ինքն էլ վիթխարի կաղնի լինի ասես, վորի յերկու կողքերից մատուց  
ծիլերի նման կանգնել են Գարիկն ու Վարդանը—նրա աշխուրջ յերկու սգ-  
նականները :

Գարիկն ու Վարդանը յերկուսն էլ կոմ յերիտականներ էլին :

Առաջինը չորրորդ տարին էր ինչ գործարանումն էր, իսկ յերկրորդը՝  
նրանից չորս ամիս հետո յեր յեկել :

Գործարան ընդունվեցին վորպէս անչափահասներ, և հիմա արդեն յեն-  
թափարակներ են :

Կաղնու կողքերից բարձրացած ճյուղերի յեն նման նրանք, հուսատու  
ճյուղեր, վորոնք կփոխարինեն, յերբ կաղնին ընկնի :

Արդեն սովորել են բանգել մեքենայի մասերը, սարքել նորից և մա-  
սամբ դեկավարել ամենաբարդ մեքենան :

Ամբողջովին մրի ու յուղի մեջ նրանք հաճախ մեքենայի փոսների մոտով  
սողակում են ներս, մաքրում, փայլեցնում ամեն մի մասը, փայտայում մե-  
քենան, ինչպէս ամենամոտ ու հարազատ մտերմի :

Վարպետ Մինասը հաճույքով էր դիտում : Նրա սիրան ուռչում էր, վո-  
ղեորովում, յերբ տեսնում էր, վոր փոխարինողները նույնպէս են վերաբեր-  
վում մեքենային, ինչպէս ինքը տասնյակ տարիների ընթացքում :

Նրան թվում էր, վոր ինքն է ջահելացել, հին վողեորութեանն ու ա-  
ռույգութեանն է յեա դարձել, յերբ փոխարինողների յեռանդուն ու նվիրված  
աշխատանքն էր դիտում :

— Ապրե՛ք, տղերք, չարչարանքս դուր տեղը չանցայ : Հմի թե մեռնեմ էլ,  
արխային կմեռնեմ, վորովհետե գիտեմ, թե մաշկնես չի կանգնելու :

Ամեն տեղ, վարպետ Մինասը գովեստով էր խոսում իր ողնականների  
մասին :

— Ղոչախ տղերք են, հարալ ընի իրանց կաթր : Քե՛քս բերում են, ախ-  
պե՛ր, յերանի չեք մեք բոլոր աշակերտներն էլ եղպես լինելին :

Յերկրորդ ամիսն էր, ինչ վարպետ Մինասը հիվանդանոցում պատկել էր :

Յերկար տարիների աշխատանքը նրան հյուսել, ուժապառ արել ու  
վերջնականապէս անկողին էր նետել :

Վարդանն ու Գարիկը շարաթական յերկու անգամ նրա մոտ էլին դնում :  
Տեսնե՛մ էլին որհարածեղտ լրեր և ուտելիքներ, նստում մահճակալի կողքին,  
գլուխում գործից, գործարանից ու վարպետ Մինասի համար կյանքը նորից  
բողբոջանալ, հրապուրիչ էր սկսում գտնուլ :

Անցան ամիսներ :

Վարպետ Մինասը սնբայ յերկար, տանջվեց անկողնում, բայց ուժերն  
աղտալեցին ու մի առափնու, յերբ արևը նոր էր ծագում, նրա գարկերակն  
լնեց՝ իշտ կանգ առալ :

Մեռալ վարպետ Մինասը :

Վարդանն ու Գարիկը թերթում հողվածներ դրեցին անդուգական վար-  
պետի մասին, ամբողջ գործարանը հուշարկավորեց նրա գիտիք և նորից մե-  
քենաները նույն չափով բանել սկսեցին :

Արմատի մոտ բաժն ճյուղերը գորացան, սճեցին ու բանեցին կաղնու  
սեղը :

Վարդանը գործարանի ամենաբարդ մեքենայի դեկավարը դարձալ, իսկ  
Գարիկը՝ նրա ողնականը :

7. ԱՐՏՈՅԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Երկարական լամպի լուսի սակ, յերրորդ ժամն և արդեն, ինչ Սան-  
թրոսյանն առանձնատեսչակում նստած, բանխորհրդի անխանացուցակն սուա-  
ջին, խորասուզվել է նրա մեջ :

Թղթի յերեսին ասես գորատես լինի, բոլոր բանխորհրդը շարքով անց-  
նում են նրա աչքերի առաջից : Ահա նա բռնում է մեկին, աչքերը կկոցելով  
յերկար նայում, ստուգում . հաշի առնում նրա թերութեաններն ու առավե-  
լաթյունները, ամսվա մեջ շանի՞ անդամ և ուշացել, քանի՞ որ բացակա յե-  
ղել : Նորից մտածում է և բաց թողնում նրան : Ահա յերկրորդը, յերրորդը,  
և այսպէս անվերջ :

Վերջապէս նրա անունը—Մինասյան Արտո :

Կանդ առալ, նորից կկոցեց աչքերը, յերկար մտածեց—«... Կոմսոմոլ ա...  
Չհաննա՛մ թե կոմսոմոլ ա... հաստադրու՛լի ա, հաստադրու՛լի... բնյում  
բան չի մտնում... Աչի, անդալ գագ ա, ոսղ արա թող գնա՛... » :

Մի անգամ էլ մտածեց և այս աստուածու տատերով ցուցակում, նրա  
անվան դեմը գրեց՝

«Կ ր ճ ա տ է ը» :

Գեո նա յերկար շարունակեց իր այդ հետաքրքիր աշխատանքը և յերբ  
ափարտեց, ցուցակում արդեն մի քանի մարդկանց անունների դիմաց գրված  
էր հեղինակագիր վճիոր :

Առափնոսյան գործարանում արտակարգ յեռուղեո էր :

Երրորդ համալրված հայտարարութեանների տախտակի մոտ, կարգում  
էլին որվա նորութեանը՝ կրճատվածների ցուցակը :

«Վճգոհների և ծուլների յեղբայրական ընկերութեանը» պատվափոր տեղ  
էր գրավել այնտեղ :

— Համա լով են ջոկել, հա՛ :

— Սանթրոսյանի մե՛րը չմեռնի, ջոկելն էլ բանց կրլնի՛ :

### 2. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԶԱՆՎՅՈՒՄ

Կոլյան և իր հայրն անցնում էին այն ջրանցքի յեզերքով, վոր բաժանա նում ե յեվրոպական քաղաքը չինականից: Ամեն կողմ յերեվում էին գործարանների շենքերը:

Նրանք մի փոքրիկ մակույկով ջրանցքն անցան և մտան գործարան, մի հսկա շենք...: Հարյուրավոր մեքենաներ, բազմաթիվ շինացի բանվորներ:

— Այստեղ ինչքա՞ն շատ պատանիներ և յերեսաներ են աշխատում:

Հորը մոտեցավ չինացի վարիչը յեվրոպական հագուստով:

— Գործարանում ինչքա՞ն բանվոր կա, — հարցրեց հայրն անզլիերեն:

— Մոտ յերեք հազար:

Մտան ներկի բաժանմունքի շենքը: Կոլյան այնտեղ տեսավ գործազույն գործվածքների կույտեր ներկելու համար: Միքանի չին վանայք մեքենայով կտորներ էին կարում: Հետո գործվածքները տարվում էին սպիտակացնելու և լվանալու բաժանմունքները, ապա չորացնելու բաժանմունքը, և վերջապես այն բաժանմունքը, ուր պատրաստի ներկված գործվածքը ծալվում և ե մեքենայով թուփերի վերածվում:

Ամենուրեք մեքենաներ, վորոնց յուրաքանչյուրին ճարպիկ կերպով գործի յե դնում չինացի բանվորը:

Իուրս յեկան փողոց:

— Հիմա տեսնե՞ք ջուլհականոցը:

Կառք նստեցին և նեղ փողոցներով հասան չինական քաղաքը:

Ջուլհականոցում մինչև հիսուն դաղգյահ կար: Այնտեղ աշխատում էին չինացի կանայք:

Կոլյայի հորը մոտենում ե կապույտ հագուստով մի չինացի թարգման, վորին հարցնում ե, թե չին կինը որական քանի՞ յարդ ե գործում:

— Մոտ քսան յարդ, պատասխանում ե թարգմանը:

— Յեվ վո՞րքան ե ստանում ամեն մի յարդի համար:

— Մի ցենտ:

— Ինչքա՞ն ջիլ, ասում ե հայրը: Քսան կոպեկ և այն էլ 12-14 մասի մի բանվորական որվա համար:

Անցան մյուս բաժանմունքը: Փոքրիկ աղջիկները թել են փաթաթում ձողիկների վրա: Փոքրիկ աղաները յեռանդով աշխատում են: Մինչևի՞ թե սաարների մուտքը չի դրդում նրանց՝ գործը թողնելու:

— Ահա գորգերի գործարանումն ենք, ասում ե թարգմանը, այնտեղ շատ յերեսաներ են աշխատում: Յեթե ուզում եք, այնտեղ դնանք:

Կոլյան և իր հայրն անցան գորգերի գործարանը: Յեվ իրավ, այնտեղ շատ յերեսաներ կան: Նրանք նստած են կիսամերկ և ճարպիկ կերպով իրենց թաթիկներն անց են կացնում հենքի թելերի միջով: Դանդաղ, բայց վորոշու էի գունավոր թելերից դուրս ե գալիս ճարտար նկարը:

— Յերեսան ի՞նչ ե ստանում, հարցնում ե Կոլյայի հայրը:

— Տասը ցենտ:

— Իսկ վորքա՞ն ե գործում:

— Որը հինգ քառակուսի մասնաչափ:

Այդ յերեսաներն այստեղ աշխատում, այստեղ ուտում. այստեղ էլ քնում են լինվոր խղճուկ վերմակների տակ: Ամբողջ որը լույսի յերես չեն տեսնում, — ասում ե հայրը Կոլյային: Նրանց շատ վատ են կերակրում. որահոտն տալիս են յերկու բուռ բրինձ: Դրա հետ միասին նրանցից շատերն աշխատում են գիշերվա հերթին: Որական 15-16 ժամից պակաս չեն աշխատում:

— Հայրիկ, իսկ նրանց ծնողներն ի՞նչպես են թույլ տալիս:

— Հենց այնպես, Կոլյա: Ծնողներն ուրախ են, վոր իրենց յերեսաներն աշխատանք ունեն: Չինաստանում շատ անտեր թափառական յերեսաներ կան: Գործարաններում այս բուպեյին 12 տարեկանից փոքր 22 հազարի շափ չինացի յերեսաներ կան: Յեթե նայելու լինես չինացի բանվորների կյանքին, մարմինը դող կընկնի: Գործարանների տերերի համար բանվորները պարզապես ստրուկներ են: Իսկ յեթե դու տեսնի՞ր դժբախտ բանվորների աշխատանքը գիշերով... մարդիկ, կանայք և յերեսաներ ուղղակի հոգնածությունից ջնում են: Կացարաններում սարսափելի դարչահոգալի հոգնածությունն է: Վորպեսզի մետաքսը չփչանա, ողը պիտի տաք և խոնավ լինի, ուղը իսկ պատճառով մետաքսի մշակման արհեստանոցում դռները և լուսատուները յերեք չեն բացվում: Արհեստանոցը հազեցած ե թանձր փոշիով: Թուրք բանվորները պարտավոր են գործարանում ապրել: Նրանք ուտում են ա ջնում արհեստանոցի հատակի վրա:

— Հայրիկ, բանվորները մի՞թե այդ բոլորը տանում են և տերերի գեմ չեն պայքարում:

— Պայքարում են, Կոլյա, և գործադուլներն անվերջ են Եանհայում: Նրանց մասնակցում են մետաղագործները, կաշեգործները, կառուցող բանվորները, մանածագործները: Բանվորական շարժումն աճում ե որեցոր: Չի նստանի բոլոր շրջաններում, ուր գործարաններ ու արհեստանոցներ կան, դալություն ունեն պրոֆսիոնիստներ:

— Բանվորները պայքարում են, Կոլյա, և մի որ կհաղթեն, անպատճառ կհաղթեն, ինչպես հաղթեցին Ռուսաստանում և կազմեցին ազատ և մեծ Խորհրդային Միությունը:

### 4. ԶԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### 3. ԳԱՂԱՔԻ ԱՌԱՎՈՏԸ

... Յեվ լուսարացին այս ու այն կողմից հեղում են, ճշում աւելիչներն ուժգին. հեղում ու ճշում, բանվորին կանչում, վողջունում գյուղի աշյլերի շարքին: Ահա խմբերով

լուս փողոցներով անցնում են թափով բանվորներն արի: Նրանց միաչափ քայլերը շտապ հանդիսան են խլում նիրհող մայթերի: Դոնապաններն էլ ձիգ-ձիգ ավելնեք

ձևըներին բռնած՝ ավլում են ճամպան, վողջունում նրանց: Մարում են հանկարծ տուն ու փողոցի լույսերը պայծառ, ու ծնվում կամաց դարթնող քաղաքի՝ ճայները հազար:



Գրավոր սրատախանեցեք հետեյալ հարցերին.

1. Ինչո՞ւ գործարանում Արտոյի առաջին որբեր ծանր անցան.
2. Ինչպիսի՞ բանվոր եր Արտոն.
3. Ինչպիսի՞ սի վարպետ եր Նիկողոսը.
4. Ինչպիսի՞ վարիչ եր Սանթրոսյանը.
5. Ինչպիսի՞ վարպետ եր Ղեկոնդը.
6. Համեմատեցեք Նիկողոսին և Ղեկոնդին.
7. Ինչպիսի՞ բանվորներ եյին Կարոն, Արամը, Սիրակը.
8. Ի՞նչ փոփոխություն յեղավ գործարանում, յերբ արատահամեց նոր մեքենաներ բերին.
9. Ինչպիսի՞ վարպետ և Կարլ Հերմանը.
10. Ինչպիսի՞ վարպետ եր Մինասը.
11. Ինչպիսի՞ բանվորներ եյին Վարդանն ու Գարեկը.
12. Ո՞ւմ հեռացրին գործարանից և ինչո՞ւ համար:
13. Համեմատեցեք մեր գործարանը Շանհայի գործարանների հետ: «Դասալիքը» և «Գործարանները Շանհայում» հոդվածներից արտադրիչք բարդ և անանցական բառերը, իբարից ստորակետով բաժանեցեք: «Դասալիքը» հոդվածի սկզբի 8 ստղը բաժանեցեք վանկերի: Գրեցեք ձեզ անձանտի բոլոր բառերը տետրակում իրոր տակ, գիմացը նշանակությունը գրելու համար:

ՔԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախադասություն, բառ, վանկ, տառեր.

Լեզուն մի միջոց է, վորով մենք կարողանում ենք մեր մտքերը արտահայտել:

Մեր մտքերը արտահայտում ենք նախադասություններով. որինտակ՝ Լենինը ծնվել է 1870 թվին:

Դաշնակների ժամանակ մեր յերկրում սով եր ու կատրած:

Նախադասությունները բաղկացած են բառերից, որինտակ Լենինը պրոետարիատի առաջնորդն եր նախադասությունը բաղկացած է չորս բառից— Լենինը, պրոլետարիատի, առաջնորդն, եր:


Բառերը լինում են յերեք տեսակ—սարգ, բարդ և անանցական. որինտակ— գիրք, սեղան, տուն—սարգ բառեր են:

Բարդ կոչվում են այն բառերը, վորոնք բաղկացած են յերկու բառից— որինտակ՝ հացթուխ, գինեվաճառ, մասվաճառ, վորդեոեր, դասընկեր, ամեհաբազ, թանաքաման:

Անանցական կոչվում են այն բառերը, վորոնք սկզբից կամ վերջից անձանց ունեն. որինտակ՝ դժգոհ, դժգուշ, մարդկային, հարսվային, ծխախոտ, փոքրիկ, չուրոս, ամաչկոս, դնորդ, վորսորդ, վարժուհի, գարձիք, չտրիք, պոչատ, թերաս և ոչին:

Բառերը բաղկացած են վանկերից. որինտակ՝ Արտոն վաս բանվոր եր, Սանթրոսյանը գործարանի վարիչը եր:

Յերբ ամբողջ բառը տողավերջում կենդանանում տեղափոխել, այն ժամանակ սողադարձ ենք անում:



1. Միավանկ բառերը բաժանել չի կարելի (մատ, տուն, դուռ):
2. Յերկու ձայնավորների մեջ գտնված բաղաձայնն անցնում է հաջորդ վանկին (մատիտ, հա-յե-լի, ա-բա-զա-վազ):
3. Յերկու բաղաձայնից մեկը մնում է նախորդ վանկին, իսկ մյուսը հաջորդ վանկին և անցնում (պատմել, սարսափ, կարգան):
4. Յերեք բաղաձայնից մեկն անցնում է հաջորդ վանկին (թարգմանել):
5. Իրար մոտ յեղած յերկու ձայնավորներից մեկն անցնում է հաջորդ վանկին (Դա-նի-ել, ո-րի-որդ, մի-տնալ):

Վանկը բաղկացած է սրտերից: Տառերը լինում են—ձայնավոր (ա, է, ք, ո, ու, ի), բաղաձայն (բ, գ, դ, զ, թ, ժ, լ խ ծ... ) և յերկբարբառ (աբ, յա, յու, ույ, յո):

Տառերը լինում են մեծատառ և փոքրատառ: Մեծատառով գրվում են.

1. Մարդկանց անունները և սղգանունները (Պողոս Մարկոսյան, Լեվոն Ֆեռաունի):
2. Աշխարհագրական անունները (Յերևան, Կարբի, Արաքս, Արաղած):
3. Թերթիկ, գրքերի, փողոցների, հիմնարկների անունները:



8736

38